Գործընկերություն հանուն լավ կառավարման

Եվրոպական միություն
եւ Եվրոպայի խորհուրդ

#StrongerTogether

ԱՊՐԻԼ, 2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆ. ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Արդարադատության ամրապնդում

- Բարձրագույն դատական խորհրդում կարգապահական հարցերով **բողոքարկման նոր համակարգի** ստեղծում՝ արձագանքելով Վենետիկի հանձնաժողովի եւ Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի (ԳՐԵԿՈ) առաջարկություններին:

- Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու համար տրամադրված աջակցության միջոցով **քաղաքացիական դատարանների գործերի քանակի նվազեցում** մինչեւ 80%, որով փոքր գումարներով պահանջները փոխանցվում են նոտարներին, եւ այդ պահանջները լուծելու մասով Հայաստանի բոլոր նոտարների գիտելիքների մակարդակի բարձրացում:

- Իրավական վեճեր լուծելուն պատրաստ ավելի քան **125 վերապատրաստված եւ հավաստագրված հաշտարարների** բանկի ստեղծում՝ այդպիսով նպաստելով Հայաստանի դատարանների գործերի քանակը նվազեցնելուն ուղղված ազգային ջանքերին:

Տնտեսական հանցագործությունների կանխարգելում եւ դրանց դեմ պայքար

- Ծրագրի շրջանակում տրամադրված առաջարկություններին համապատասխան հզորացվել է **ազդարարների պաշտպանության** գործիքակազմին առնչվող օրենսդրական դաշտը, ինչպես նաև բարձրացվել են ազգային շահագրգիռ մարմինների կարողությունները ազդարարների իրավունքների արդյունավետ պաշտպանության նպատակով:

- Մշակվել է **բարձրաստիճան պաշտոնատար անձանց բարեվարքության ստուգմանն ուղղված** իրավական դաշտի բարելավմանն ուղղված նախագիծ, որով ներդրվում են ԳՐԵԿՈ-ի գնահատման 5-րդ փուլի առաջարկություններին համահունչ **հսկողության միջոցներ:**

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից Հանրային ծառայողների վարքագծի օրինակելի կանոնագրքի մեկնաբանման ձեռնարկի ընդունման եւ հրապարակման միջոցով պետական պաշտոնատար անձանց համար խթանվել է **էթիկայի չափանիշների եւ մասնագիտական վարքագծի վերաբերյալ գործնական ուղղորդման** մատչելիությունը:

- Ամրապնդվել են **Ֆինանսական եւ ոչ ֆինանսական հաստատությունների** ավելի քան **160 ներկայացուցիչների** ունակությունները փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ պահանջների պահպանման եւ թիրախային ֆինանսական պատժամիջոցների կիրառման առնչությամբ, ինչպես նաեւ բարելավվել են **իրավապահ մարմինների** շուրջ 90 **մասնագետների** ունակությունները տնտեսական հանցագործությունների դեպքերի քննության առնչությամբ:

Հավասարության եւ խտրականության բացառման խթանում

- Ծրագրի շրջանակներում տրամադրված առաջարկություններին համահունչ մշակված՝ **հավասարության եւ ազգային փոքրամասնությունների վերաբերյալ բարելավված նորմատիվ դաշտի նախագիծ:**

- Կարողությունների զարգացման վերաբերյալ դասընթացների եւ հայալեզու վերապատրաստման ռեսուրսներին ընդլայնված մատչելիության միջոցով **ոստիկանության ծառայողների, դատախազների եւ իրավապահ այլ մարմինների աշխատակիցների** բարձր հմտություններ՝ **ատելության հիման վրա կատարված հանցագործությունները** եվրոպական չափանիշներին համահունչ կանխարգելելու եւ քննելու համար:

- **Պրոֆեսորների, դասախոսների եւ ուսուցիչների բարձր հմտություններ՝** Հայաստանի կրթական հաստատություններում **ատելության խոսքի եւ բուլինգի հասցեագրման համար:**

- **Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակազմի անդամների** բարելավված կարողություններ՝ որպես խտրականության, ատելության հիման վրա կատարված հանցագործությունների եւ ատելության խոսքի տուժողների իրավական պաշտպանության մեխանիզմ Գրասենյակի մանդատն իրացնելու համար, մասնավորապես՝ Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) ատելության խոսքի դեմ պայքարի մասին Ընդհանուր քաղաքականության վերաբերյալ թիվ 15 առաջարկության վերաբերյալ «HELP» առցանց դասընթացն անցնելու միջոցով:

Եվրոպական միությունը եւ Եվրոպայի խորհուրդն Արեւելյան գործընկերության երկրների հետ աշխատում են ավելի արդյունավետ կառավարման, իրավունքի գերակայության խթանման եւ քաղաքացիների կյանքի բարելավման ուղղությամբ: Նրանք 2014 թվականին մեկնարկել են «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագիրը, որով աջակցություն է տրամադրվում երկրների՝ եվրոպական չափանիշներին համահունչ արդարադատության ամրապնդման, տնտեսական հանցագործությունների հակազդման, հավասարության եւ խտրականության բացառման խթանման, կանանց համար արդարադատության մատչելիության մակարդակի բարձրացման եւ կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարին ուղղված ներպետական բարեփոխումների իրականացման համար: Դա կատարվում է շահառու երկրների կարիքներին աջակցելու համար համապատասխանեցված տեխնիկական օժանդակության եւ Արագ արձագանքման մեխանիզմի միջոցով, որը Վենետիկի հանձնաժողովի եւ Եվրոպայի խորհրդի այլ մարմինների կողմից ըստ պահանջի օրենսդրական փորձաքննության եւ քաղաքականության վերաբերյալ խորհրդատվության տրամադրման գործիք է: Ծրագրի ընթացիկ փուլը (3-րդ փուլ), որն ընթանում է 2023 թվականից մինչեւ 2027 թվականը, հիմնված է նախորդ փուլերի շրջանակներում գրանցված արդյունքների եւ առաջընթացի վրա:

Ավելին մեր աշխատանքի մասին՝
https://go.coe.int/VzS8G

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից
Եվրոպական միություն
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE
Համաֆինանսավորվում և իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից